ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2023թ.դեկտեմբերի 27

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Սառա Ղազարյան «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

Տաթևիկ Նալբանդյան «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարարական կազմակերպություն

Ալլա Հարությունյան «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

Էդուարդ Կիրակոսյան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն

Աիդա Մուրադյան «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ

Վարդուհի Դադունց «Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամ

Տաթևիկ Խաչատրյան Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Դավիթ Խաչատրյան նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան նախարարի տեղակալ
Տաթևիկ Ստեփանյան նախարարի տեղակալ
Սամվել Մուրադյան գլխավոր քարտուղար
Զարուհի Մանուչարյան մամուլի քարտուղար

Բացակայում էին՝

Աննա Ժամակոչյան նախարարի տեղակալ
Գրիգորի Հովհաննիսյան «Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Արևիկ Հովհաննիսյան «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպություն
Դավիթ Ամիրյան «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպություն
Նվարդ Փիլիպոսյան «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Անի Գաբրիելյան «Լուսաստղ» հասարակական կազմակերպություն
Հունան Հունանյան «Սատար» հաշմանդամների հասարարական կազմակերպություն
Վարդուհի Դադունց «Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամ

Մանանե Պետրոսյան «Երեխաների աջակցության կենտրոն»հիմնադրամ

Միրա Անտոնյան «Երեխաների աջակցության կենտրոն»հիմնադրամ

Նելի Դռնոյան Ֆիզիկական անձ

Մարուսյա Ճաղարյան Ֆիզիկական անձ

Հայկուհի Թովմասյան Ֆիզիկական անձ

Տաթևիկ Կարապետյան Ֆիզիկական անձ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2023թ. գործունեության ամփոփում**

(Ներկայացնող՝ Նախարար)

2. **Հարցու պատասխան.քննարկում**
   - Խորհրդի անդամներ (ՀԿ ներկայացուցիչներ,անհատներ)
   - ԱՍՀ նախարար-Նարեկ Մկրտչյան
   - ԱՍՀ նախարարի տեղակալ - Դավիթ Խաչատրյան
   - ԱՍՀ նախարարի տեղակալ - Ռուբեն Սարգսյան
   - ԱՍՀՆ գլխավոր քարտուղար - Սամվել Մուրադյան
   - Մամուլի քարտուղար- Զարուհի Մանուչարյան

1. Մինչ Խորհրդի տարեվերջյան ամփոփիչ նիստի հարցերին անդրադառնալը՝ Խորհրդի Նախագահը ողջունեց Խորհրդի մասնակիցներին՝ ներկայացնելով 2023 թվականին աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված բարեփոխումները, միաժամանակ

անդրադարձավ 2024 թվականին նախատեսվող ոլորտային բարեփոխումներին:

Այնուհետև նախարարի տեղակալ Դ.Խաչատրյանը ներկայացրեց համառոտ տեղեկատվություն **ժողովրդագրության և կենսաթոշակային ապահովության ոլորտներում** կատարված աշխատանքների վերաբերյալ: Ինչպես նաև անդրադարձավ կենսաթոշակի և նպաստների անկանխիկ վճարման, ծնելիության աճի խթանման, բնակարանային ապահովման և մի շարք այլ ուղղություններով կատարված աշխատանքներին:

Նշեց, որ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման գործընթացում տեղ գտած փոփոխությունների հետ կապված կարևորվել է ծնելիության խրախուսմանն ուղղված միջոցառումների դերը: Ներկայացրեց նաև 1-ին և 3-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրման առավել մեծ երաշխիքների սահմանման տեսլականը և ընդգծեց երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ծրագրի շրջանակում առավել հասցեական մոտեցումների սահմանման անհրաժեշտությունը:

Ներկայացրեց նաև, որ իրագործվել և շարունակվում է սահմանամերձ գյուղերում բնակարանային մատչելիության ծրագիրը: Միաժամանակ քննարկման փուլում է գտնվում ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիներին բնակարանային ապահովման ծրագիրը:

Առանձնացրեց նաև, որ ավագ սերնդի առողջության ակտիվ ծերացման ապահովման նպատակով դիտարկվում է ավագ սերնդի զբաղվածության խթանման միջոցառում իրականացնելու հնարավորությունը: Հավելեց նաև, որ անկանխիկ գործարքներից կենսաթոշակի և նպաստի 10% հետվճարի ծրագրից կկարողանան օգտվել բոլոր

կենսաթոշակառուներն ու նպաստառուները՝ անկախ նրանից,թե որ բանկերից ենստանում իրենց գումարը:

Նախարարի տեղեկալ Տ.Ստեփանյանը ներկայացրեց **հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, երեխաների,** ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի ոլորտներում 2023թ. իրականացված աշխատանքները:

Կարևորագույն փոփոխությունների շարքում առանձնացրեց նաև անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ներդրման, աջակցող միջոցների ցանկի վերանայման, անկախ կյանքի ծառայությունների համալիր նախագծման,ինչպես նաև փոքրտների ընդլայնման գործընթացները:

Անդրադառնալով երեխաների հիմնահացերին՝ ներկայացրեց երեխայի պաշտպանության համակարգում նախատեսվելիք փոփոխությունները, թվարկեց նոր խնամքի ծառայությունները:

Միաժամանակ անդրադառնալով **աշխատանքի և զբաղվածության ոլորտում** իրականացված աշխատանքներին՝ Նախարարը կարևորեց Աշխատանքային օրենսգրքում իրականացված մեծածավալ փոփոխությունների, կամավորության ինստիտուտի ներդրման, հեռավար աշխատանքի օրենսդրական կարգավորումների և մի շարք այլ ուղղություններով իրականացված աշխատանքների դերը: Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններով պայմանավորված կարևորեց նաև փորձնակի ինստիտուտի հնարավորությունը, այն է՝ համալասարանը ավարտելուց հետո ուսանողին աշխատաշուկա մտնելու հնարավություն է տրվում: Միաժամանակ կարևոր համարեց կենսաթոշակային հիմքով աշխատանքային պայմանգրի լուծման վերանայումը, այսինքն կենսաթոշակային տարիքը չպետք է խոչընդոտի անձի հետագագործունեության:

Նշեց նաև,որ 2024 թ. ոլորտում նախատեսվող ծրագրերը

կբխեն Զբաղվածության **2024-2030թթ.** ռազմավարությունից:

Նիստի ավարտին Նախագահը շնորհակալություն հայտնեց հասարակական խորհրդի անդամներին ներկայության և ակտիվ մասնակցության համար՝ նշելով, որ վերջիններիս կողմից ներկայացված առաջարկներն ու դիտարկումները հնարավորություն կտան նախատեսվող բարեփոխումները դարձնել առավել կառուցողական և արդյունավետ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

1/4/2024

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն.ՄԿՐՏՉՅԱՆ

Արձանագրությունը կազմեց՝ Ա.Խաչատրյանը